# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լաբտեխ Գրուպ ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Իներտ Միջավայրի Պահարան 4 ձեռնոցով, ազոտի և ջրածնի գեներատորներով, խառնման կայանքով | GBP750S-4 | GBP750S-4 | TENCAN | Սարքի աշխատանքը ամբողջությամբ ավտոնոմ է, սարքի իրանը ամբողջությամբ պատրաստված է 304 կարգի առնվազն 3 մմ հաստությամբ չժանգոտվող պողպատից, դիմապակու հաստությունը առնվազն 12մմ է, որը երկկողմ լամինացված է: Սարքը հագեցած է թթվածնի, օրգանական լուծիչների և խոնավության սենսորներով և դրանց պարունակությունը առավելագույնը 1 PPM կամ ≥99,9995% ապահովվող մաքրման կայանքով՝ առնվազն 1 հատ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | առնվազն 6,5 կգ պղնձե, առնվազն 1 հատ առնվազն 6 կգ մոլեկուլային ցանցային ֆիլտրեր, առնվազն 17լ ծավալով օրգանական միացությունների զտման ֆիլտր: Առնվազն 7 դույմ սենսորային կառավարման վահանակ, վակումային պոմպ Edwards RV-12 կամ Vacuubrand կամ Leybold, առնվազն 2*10-3 վակումի և 4լ/վ հզուրությամբ: Սարքն ունի կողային երկու անկախ խցիկներ (φ360×600±2մմ և φ150×360±2մմ)՝ նախատեսված առանց հիմնական խցիկի հերմետիկության խախտման իրեր ներս և դուրս տեղափոխելու համար: Լուսավորություն՝ առնվազն 48 վտ ԼԵԴ լույս: 4 հատ բութիլ ձեռնոց 0,4մմ պատի հաստությամբ, չափսերը՝ 200*800±2մմ: Սարքն ունի վակուումի/ազոտի փական, առնվազն 8 հոսանքի վարդակ, առնվազն չորս ստանդարտ KF-40 պորտեր, կրկնակի HEPA ֆիլտր, առնվազն 100մ3/ժ հզորությամբ օդափոխիչ, 4 դարակաշար, խցիկի ներքին չափսեր՝ 2000±100*800±50*1000±100մմ, սարքի արտաքին չափսեր՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2600±100x800±50*1800±100մմ: Ազոտի գեներատոր: Գեներացված գազի մաքրություն ≥99,999%: Սարքը նախատեսված է ձեռնոցատուփերին գերմաքուր գազային ազոտի մատակարարման և պահպանման համար։ Տեխնիկական պարամետրերն են` արտադրողականություն` ≥ 17 L / Րոպե: Գեներացված գազի ելքային ճնշում` ≥ 8 մթն, գազի պահպանման բալոնի ծավալ` ≥ 100 L: Սարքի սնուցման պարամետրեր` 220 վ / 50Հց, 1 կվտ։ Սարքի արտաքին չափսեր` 700*600*1300 մմ ± 10%: Սարքը կառավարվում է ծրագրավորվող թվային համակարգով, հագեցած է մի շարք անվտանգային համակարգերով, ինչպես նաև մուտքային/ելքային գազերի, բալոնի ճնշման ցուցիչներով։ Աշխատանքային ռեժիմում սարքի աղմուկը ոչ ավել քան 50 դբ։ Ազոտի գեներատորը համալրված է` 1) օդի կոմպրեսորով` առնվազն 200 L ծավալով բաքով, 4 հատ 1500 Վտ անյուղ մեմբրանային պոմպերով (ընդհանուր 6 կվտ): 2) Օդը չորացնող ավտոնոմ սարքից` |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նախատեսված է 2,5-3 մ3/ր օդի հզորությամբ կոմպրեսորի արտադրած 8-12 մթնոլորտ ճնշման տակ գտնվող գերտաք օդը սառեցնելու, կոնդենսատը կուտակելու և ավտոմատ կերպով այն հեռացնելու համար: Այն բաղկացած է 600վտ կոմպրեսորից, հովացնող օդափոխիչից, հովացման ջերմափոխանակիչից: Ունի եռաստիճան ֆիլտրման համակարգ՝ ջուրը, օրգանական միացությունները, փոշին, բակտերիաները և հոտերը 99,9% հեռացնելու համար, մաքրված օդում մնացորդների պարունակությունը չպետք է գերազանցի 0,001 մգ/մ3, 0,001 ppm: Ջրածնի գեներատոր: Նախատեսված է գերմաքուր չոր գազային ջրածնի ստացման։ Տեխնիկական պարամետրերն են. Գեներացված գազի մաքրություն ≥99,99%: Գեներացված գազի արտադրողականություն. ≥ 1000 մլ / րոպե: Գեներացված գազի ելքային ճնշում. ≥ 6 մթն.: Սարքի սնուցման պարամետրեր. 220 վոլտ/50Հց, 350 վտ։ Սարքի արտաքին չափսեր առավելագույնը 60*30*45 սմ: Սարքը |

կառավարվում է ծրագրավորվող թվային համակարգով, հագեցած է մի շարք անվտանգային համակարգերով, ինչպես նաև մուտքային/ելքային գազերի ցուցիչներով: Աշխատանքային ռեժիմում սարքի աղմուկը ոչ ավել քան 50 դբ: Գազերի խառնման կայանք: Թողունակությունը առնվազն 25 լ/ր, առավելագույն մուտքային ճնշում` 60 մթն, առավելագույն ելքային ճնշում` 25 մթն, խողովակաշար` 8 մմ, ճշգրտությունը առնվազն` 2,5%: Համակարգը պետք է ներառի հավելյալ պահեստամասեր` 2 զույգ բութիլային ձեռնոց, 2 զույգ ձեռնոցի օղակներ, վակումային յուղ 8 լ, օդի ֆիլտր և կաթիլորսիչ` կարգավորվող փականով` 1 հատ, 8 և 10 մմ պոլիուրետանյաին խողովակներ` 50-ական մետր, միացումների համար անհրաժեշտ ցանկացած այլ կցամաս, փական, ճնշաչափ և այլն պետք է տրամադրվի մատակարարի կողմից: Փաթեթը ներառում է` տեղափոխում և տեղադրում ՕԴՔ ԳՏԿ 2 հարկի լաբորատորիայում, սարքի մեկնարկ, ուսուցում:

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЛАБТЕХГРУП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Երաշխիքային ժամկետը 1 տարի: Երաշխիքային սպասարկում` 1 տարի: |